ներկայացնել իւրեանց հաշիւները առ փոխթեմակալ և Կոնսիստորիային Երևանայ, որով և հանդարտեցնեն ժողովրդեան իրաւացի պահանջները միանգամայն բառնալով գայթակղութեանց պատճառները։

Իսկ եթէ մինչև որոշեալ ժամանակը կըրկին լռութիւնը պատասխան պահելու լինին, մենք պիտի պարտաւորուինք վերոյիշեալ պարոնի բողոքը հրատարակել․․․։

---

### Մայր Աթոռոյս նուիրեալ երեք հատ ձէթ խաչեր

Ապրիլ 10-ն ամսաթւով և 116 համարով՝ Վեհ. Կաթողիկոսը յատուկ կոնդակաւ առաջարկած էր առ Արժանապատիւ Մովսէս Աւագ Քահանայ Սայեաթնեանց, Տփխիսոյ Ազգայնոց ոմանց նպաստիւք՝ նորաշէն գմբէթայարկ պահարանոյ վերայ կանգնելու համար երեք խաչեր շինել տալ անդ և նուիրել Մայր Ս. Աթոռոյս։

Այժմ պարտք կըհամարիմք հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել առ Արժանապատիւ Մովսէս Աւագ Քահանայն՝ որ պատուելով Հայրապետական առաջարկութիւնը ամենայն սիրով, նպաստիւք երեք Յարգելի Ազգայնոց շինել տալէն յետոյ երեք հատ ոսկեզօծ խաչերը, բերաւ և յանձնեց անձամբ 'ի Մայր Աթոռս մեր։

Նոյնպէս քաղցր պարտք կըզգամք մեր սրտագին շնորհակալեաց հաւատալքը մատուցանել նուիրատու Պարոն Սողոմոն Նազիրեանցին և Պարոն Աղէքսանդր Ջանջուղազեանցին՝ որք երկու երկու հարիւրական ռուբլի, և Պարոն Բարսեղ Արամղեանցին՝ որ հարիւր ռուբլի՝ ընծայեցին 'ի նպաստ շինութեան երից մեծագին խաչից։

Իսկ խաչից ծախքը ամենայն պարագայիւք վեց հարիւր երկու ռուբլեաց գումար կըբանէ, յորոյ նուիրեալ հինգ հարիւր մանէթը 'ի բաց հանելով՝ կըմնայ պարտք հարիւր երկու մանէթ, զոր անշուշտ եմք, թէ ջանիւք յիշեալ Աւագ Քահանային՝ 'ի վերադառնալն 'ի Տփխիս, բարեպաշտ և ազնիւ Ազգայիններէն ոմանք կը բաշխանուիրել, և այդ նուիրատուաց անուանքը 'ի ժամանակին կը փութամք սիրով հրատարակել հանդերձ շնորհակալութեամբ։

---

## ՑՈՒՑԱԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԱՑ
### Ի ՆՊԱՍՏ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ
### Ս. ԱԹՈՌՈՅՍ

---

Ի ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆ ԵՒ Ի ՎԻՃԱԿՆ

Ի ձեռն Յովհաննէս վարդապետի Տէր Յարութիւնեանց նախկին փոխանորդի։

| | Ռուբ. | Կոպ. |
|---|---|---|
| Յովհաննէս վարդապետ Տէր Յարութիւնեան . . . . . . | 20 | — |
| Մկրտիչ Աւագ Քահանայ Սարգսեան . . . . . . . . | 5 | — |
| Թադէոս Քահանայ Տէր Գասպարեանց . . . . . . | 3 | — |
| Մկրտիչ Քահանայ Տէր Սարգսեան . . . . . . . . | 2 | — |
| Մահտեսի Մկրտիչ Թունեանց | 30 | — |
| Կարապետ Գասպարեանց . . | 5 | — |
| Վարդան Բունիաթեան . . | 5 | — |
| Մահտեսի Ստեփան Յակոբեան . | 4 | — |
| Ներսէս Տէր Աստուածատրեան . | 2 | — |
| Խաչատուր Քեալանթարեանց . | 3 | — |
| Բաբայ Մելիք Բաբայեանց . . | 3 | — |
| Անդրէաս Օրբէլեանց. . . . | 3 | — |
| Բաղդան Խուդավերդեանց . . | 5 | — |
| Օհաննէս Եղիազարեան . . | 10 | — |

| | Ռուբլի | կոպ. |
|---|---|---|
| Գուլախայ Խոսրովեանց . . . | 10 | — |
| Գիւլբեզար Հարօեան՝ կին Մախսուտի . . . . . . . . | 8 | — |
| Բ. Մելիք Էյնաթեանց . . . | 2 | — |
| Գէորգ Օհաննէսեանց . . . | 2 | — |
| Բաղդասար Եղիազարեան . . | 3 | — |
| Համբարձում Սահակեանց . . | 1 | — |
| Բաբալ Պօղոսեան . . . . | 2 | — |
| Մահտեսի Մանուկ Յօլչեան . | — | 40 |
| Ներսէս Ներսէսեանց . . . . | 1 | — |
| Ստեփան Ալխարեանց . . . | 3 | — |
| Համբարձում Ղազարեանց . . | 2 | — |
| Կոստան Սահակեան . . . | 1 | 50 |
| Սիմոն Սիմոնեանց . . . | 3 | — |
| Յակոբ Տէր Մինասեան . . . | 1 | — |
| Գասպար Տէր Աստուածատրեան. | — | 50 |
| Մաթէոս Աղաբեկեան . . . | 1 | — |
| Յովսէփ Ալչանեան . . . | 1 | — |
| Գրիգոր Տէր Գասպարեանց . . | 2 | — |
| Սահակ Աւախեան . . . | — | 50 |
| Գէորգ Աղէքսանեան . . . | — | 20 |
| Յակոբ Խաչատրեան . . . | — | 20 |
| Միրզայ Աւախեան . . . . | — | 15 |
| Յակոբ Մելիք Մուրատեան . | 1 | — |
| Եղիազար Մելիքսեթեան . . | 1 | — |
| Բեհրամ Առաքէլեան . . . | 1 | — |
| Մարգար Տէր Երեմեան . . | 1 | — |
| Օհան Օհանեան . . . . | — | 20 |
| Գ. Մամի . . . . . . . | — | 20 |
| Յովհաննէս Կեանջումեան . | 1 | — |
| Դանիէլ Քահանայ Յովսէփեան . . . . . . . . | 2 | — |
| Մահտեսի Խաչակ Եսակարեան | 3 | — |
| Մահտեսի Մարտիրոս Յովհաննէսեան . . . . . . . . | 1 | — |
| Գրիգոր Նազարեան . . . . | 1 | — |

| | Ռուբլի | կոպ. |
|---|---|---|
| Մկրտիչ Գասպարեան. . . . | — | 60 |
| Աւետիք Մահտեսի Գէորգեան | — | 50 |
| Պօղոս Մելիք Համիրեանց . . | 1 | — |
| Ստեփան Եսակարեան . . . | — | 60 |
| Երիցփոխ Բունեաթ Յակոբեան . . . . . . . . . | 1 | — |
| Յովհաննէս Մահտեսի Ռուստամեան. . . . . . . . | — | 20 |
| Կարապետ Թարօեան . . . | — | 50 |
| Յովսէփ Աստուածատրեան . | — | 50 |
| Մկրտիչ Գաւթեան . . . | — | 40 |
| Մահտեսի Մարգար Խաչատրեան . . . . . . . . . | — | 30 |
| Մահտեսի Մարտիրոս Մահտեսի Սափարեանց. . . . . | 1 | — |
| Հասարակութիւնք Հ. Գողզայու 'ի ձեռն Վրթանէս Քահանայի Տէր Պօղոսեանց, Մելիք Պօղոսի Ղազարեան, Երիցփոխ Աւէտսեանի, Մելիք Մարտիրոսի Պապի Մելիք Ստեփանեան . . | 10 | — |
| Հասարակութիւնք Գեր գիւղի 'ի ձեռն Երիցփոխ Յովհան Մահտեսի Վարդանեանի, Մահտեսի Անտօնի Խան Նալբեան, Մանզարի Յարութիւնեան, Վրթանէս Քահանայի Տէր Յովսէփեան, Ստեփաննոս Քահանայի Յակոբեան . . . . . . | 10 | — |
| Հասարակութիւնք Աղայ գիւղի՝ 'ի ձեռն Երիցփոխ Սարգսի Բարսեղեանց Մելիք Յակոբի Կարապետեան . . . . . . | 20 | — |
| Հասարակութիւնք Օրդուբադ Քաղաքի 'ի ձեռն Երիցփոխ Սարգսի Բէգլարեան, Յարութիւնի | | |

Խաչատրեան, Երզնկի Տէր Գրիգորեանց . . . . . . . 10 —
Յարութիւն Քահանայ Յարութիւնեանց . . . . . . . 1 —
Ժառանգաւորութիւնք Ն. Ժանդամջ գիւղի՝ ՝ի ձեռն Երէցփոխ Յարութիւնի Մկրտչեան, Խաչի Գէորգեան Սալախանեան, Բաղդասարայ Պետրոսեանց . . . 10 —

(Շարունակելի):

---

## Կտակ Բարեպաշտուհւոյ Եղիսաբէթ Տիկնոջ Յովակիմեանց

Հանգուցեալ բարեպաշտուհի Եղիսաբէթ Տիկին Յովակիմեան Հայրապետեանց՝ որ է հարազատ քոյր Վսեմականին Իշխանի Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց, յօգուտ Մայր Ս. Աթոռոյս Առաքելական՝ հինգ հարիւր ռուբլի կտակած գոլով զոր կտակակատարն՝ ամսոյս 3-ին Մ[illegible] Ժողովոյ Կառավարութեան անդամ Արժանապատիւ Յարութիւն Աւագ Քահանայ Կօստանեանցի միջոցաւ հասոյց Մայր Աթոռոյս: Ուստի Վեհ. Կաթողիկոսը բարեհաճեցաւ հրամայել ամսոյս 7-ին՝ կիրակի օրը ընի Ս. Պատարագին՝ միաբանական ուխտիւ պաշտօն կատարել վասն հոգւոյ բարեյիշատակ Տիկնոջ Եղիսաբէթի Յովակիմեանց, զոր տէր հանգուցեալ ՝ի փառս յաւիտենական երջանկութեան:

---

## Ժամանումն Գերապատիւ Մկրտիչ Ս. Եպիսկոպոսի Խրիմեան Նորընտիր Պատրիարքի ՝ի Կ. Պօլիս.

Կ. Պօլսոյ ազգային լրագիրներէն տեղեկացանք, որ Գերապատիւ Մկրտիչ Ս. Եպիսկոպոս Խրիմեան Նորընտիր Պատրիարքը՝ Նոյեմբեր ամսոյ վերջին ժամանած է ՝ի Տրապիզոնէ ՝ի Պօլիս՝ Օսմանեան Կայսերական Կառավարութեան կողմանէ առաքուած յատուկ շոգենաւով:

Ընդունելութեան Նորին Գերապատուութեան քաջ յայտնի են մեր Տաճկաստանաբնակ իրեն ազգայնոց կարօտութիւնքը, քաջ յայտնի են այն խնդիրները, որոց լուծման անհամբեր ոգւով կըսպասեն մեր ազգայինք, հետեւաբար հարկ անհրաժեշտ է նոցա լուծումը ըստ կարելւոյն փութացնել, և բազմափորձ Նորին հեռատեսութեամբ և արժանաւոր եղանակօք և համեմատ եկեղեցական կանոնաց՝ վերջ տալ նոցա:

Ուստի կը մնայ Նորին Գերապատուութեան հանճարոյն և շրջահայեաց խոհեմութեան՝ այդպիսի կնճռոտ պարագայից մէջ՝ ուր ողջախոհ ալեւորներ կարող են լինել և փաստաբանող, յօգուտ Ազգի մերոյ և Եկեղեցւոյ՝ այնպիսի ընթացք բռնել, զի կեղէն վէրք ՝ի վերայ վէրաց չբացուին: Վասնորոյ Արարատս կըփափաքի խանդակաթ բարեմաղթել ՝ի Տեառնէ վասն Նորին Գերապատուութեան շնորհել կորովութիւն, համբերութիւն և յաջողութիւն, որպէս զի Եկեղեցւոյ օգուտը, և Ազգի կամքը և բարի նպատակները փառաւորուելով, փառաւորուի և Նորին Սրբութիւնը:

---

Հետեւեալ նամակով մի քանի հետաքրքրական ծնութիւններ ստացած ենք Հօտոմ գիւղ բարեկրօն Մինաս Քահանայէն: Յաջորդ կամ փետր. ամսագրով կը հաղորդենք բանասիրաց յիշեալ ծնութիւնները:

Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Ամենայն ուսումնասիրաց անհրաժեշտ պարտաւորութիւն է, չհեռ լինել զիւրեց յամենայն ՝ի կեանս իւրեանց, և յորպէս աշխատութիւնս ցանց զինքեանս Թևակոխեալ՝ զխմառութեան և զկատարելութեան իւրեանց ՝ի լոյս հանեն զարգասիս. զի ոման